

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՅԴԱՐՅԱՆ ՀՈՒՇԱՆԳ

ՆԱԿԹԱՄԹԵՐՔԻ ԳՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎՐԱ (ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ)

Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում»

մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Գիտական ղեկավար՝
տ.գ.դ., պրոֆեսոր Հայկ Մնացականյան

ԵՐԵՎԱՆ-2019

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Պետական Համալսարանում:

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ՀԱՅԿ ԳԵՐԱՍԻՄԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ԱՇՈՏ ՎԱՐԱԶԴԱՏԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

տնտեսագիտության թեկնածու
ՐԱՖՖԻ ԱՐԱՅԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

**Առաջարար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտ**

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2019թ. մարտի 14-ին ժամը 14:00-ին, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ 0025, Երևան, Նալբանդյան 128

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2019թ. հունվարի 30 -ին:

014 մասնագիտական խորհրդի գիտքարտուղար,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր



L. Գրիգորյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Սույն հետազոտությամբ ուսումնասիրվում է նավթային եկամուտների ազդեցությունն Իրանի տնտեսության վրա՝ 2000-2016 թթ., որի համար օգտագործվել են ԻԻՀ Կենտրոնական Բանկի վիճակագրական տվյալները:

Երկրորդ համաշխարհային պատերազմից մինչ այսօր նավթը կենսական նշանակություն ունի Իրանի տնտեսության մեջ: Կապիտալ ներդրումների բոլոր ծրագրերում նավթային եկամուտների դերը ծրագրերի ֆինանսավորման հարցում ամեն անգամ ավելի մեծ նշանակություն է ստացել, ինչն ակնհայտ է յուրաքանչյուր ծրագրում նավթի մասնաբաժնի ընդհանուր գումարի և եկամտի համեմատությունից:

Հետազոտության թեման կարևորվում է մասնավորապես հետևյալ հանգամանքներով՝ 1) Իրանի պետեկամուտների 65 տոկոսն ապահովվում է նավթից, 2) կառավարության կողմից իրականացվող նախագծերի 60 տոկոսի ծախսերը կատարվում են նավթային ոլորտի հատկացումներով, 3) կառավարության հարկային անուղղակի եկամուտների 15 տոկոսն ապահովվում է նավթից, 4) ՀՆԱ-ի 30 տոկոսն ապահովվում է նավթից: Եվ այն կարևորվում է նրանով, որ երկրի տնտեսական աճը, ՀՆԱ-ն, սղաճը, գործազրկությունը, կապիտալ ներդրումների նախագծերի իրագործումը և պետական ու մասնավոր ընկերությունների շահութաբերությունը կրում են նավթային եկամուտների ազդեցությունը: Իսկ առավել կարևոր հանգամանքներից է հետազոտության ժամանակային կտրվածքը՝ Իրանի նկատմամբ նավթային սանկցիաների ժամանակահատվածը (2012-2015 թթ.), որն առանձնացնում է աշխատանքը մինչ այս կատարված մյուս ուսումնասիրություններից: Նախորդ հետազոտությունների արդյունքները տարբերվում են ներկայիս ժամանակային կտրվածքի հանգամանքներից, այդ իսկ պատճառով, անհրաժեշտ էր ուսումնասիրել նշված ժամանակահատվածում ստեղծված պայմանները:

Նմանատիպ հետազոտության բացառումը կարող է կրկին հասարակությանը կանգնեցնել նավթային եկամուտների կրճատման պայմաններում, որից տուժելու են Իրանի կառավարությունը և քաղաքացիները: Թեմայի մշակվածության աստիճանի մասին վկայող մինչ օրս կատարված հետազոտություններն ու հրապարակված աշխատանքները՝ ժամանակային և տարածական տարբեր կտրվածքներով նմանատիպ հետազոտության իրականացման անհրաժեշտության վառ ապացույցն են: Հաշվի առնելով Միջին Արևելքում ստեղծված իրավիճակը, ցանկացած պահի սպասվում է, որ կրկին հնարավոր է նավթային եկամուտների հարցով խնդիրներ ծագեն:

Հետազոտության շրջանակներում ներկայացված առաջարկությունները կարող են կանխարգելել ճգնաժամի առաջացումը, քանի որ հետազոտվող ժամանակահատվածում գործադրվել են նավթային սանկցիաներ և շոկեր: Հետևաբար, այն առանձնահատուկ նշանակություն է ստանում նավթի արտահանման հետ կապված խնդիրների

լուծումների առումով: Եվ ավելին է կարևորվում այն՝ հաշվի առնելով, որ որևէ համաշխարհային երաշխիք չկա նավթային շուկերը չկրկնվելու տեսանկյունից, և դրանց կրկնությունը հնարավոր է՝ ինչպես համաշխարհային տնտեսական այլ ճգնաժամեր:

Հետազոտության արդիականության մասին նշված հանգամանքները կարևորում են տնտեսական գործոնների վրա նավթային եկամուտների ազդեցությունը և աշխատանքում առաջարկվում են լուծումներ նավթային եկամուտների կրճատման դեպքում ապահովելու կառավարության աշխատանքը՝ սղաճի և գործազրկության աճը, ինչպես նաև ՀՆԱ-ի կրճատումը կանխարգելելու ուղղությամբ:

Նավթի հարցով սանկցիաներն ու գների անկումը պատճառ են դառնում, որպեսզի Իրանի նավթի վաճառքը համաշխարհային շուկաներում բարդությունների առջև կանգնի և երկրի տնտեսությունը լուրջ վնասների ու հարվածների ենթարկվի: Հետևաբար, պետք չէ ժամանակը վատնել, անհրաժեշտ է իրագրել լինել նրա տնտեսական վնասների մասին և կառավարության կողմից ծրագրեր մշակել այդ բացասական ազդեցությունները կրճատելու ուղղությամբ:

Նավթային եկամուտների կրճատման արդյունքում կրճատվում են պետեկամուտները, հետևաբար նաև՝ կապիտալ ներդրումների գծով բյուջեն և ընթացիկ ծախսերը, որոնց դեֆիցիտի համար կառավարությունն ստիպված է լինում վարկեր ստանալ Կենտրոնական Բանկից, ինչն էլ հանգեցնում է սղաճի: Վերջին տարիներին նավթային սանկցիաների հետևանքները ցույց տվեցին, որ սույն հետազոտության արդյունքները կարող են նպաստել բնակչության բարեկեցության ապահովմանը և կանխելու են ռեսուրսների վատնումն ու սխալների կրկնությունը:

Ատենախոսության թեմայի շրջանակներում նախատեսվել է ուսումնասիրությունն իրականացնել ընդամենն Իրանի տարբերակով (հաշվի առնելով Իրանի տնտեսության նկատմամբ կիրառվող սանկցիաները) և առանց նավթ արտահանող այլ երկրների հետ համեմատության, քանի որ նմանատիպ իրադարձություն մինչ օրս չի նկատվել նավթ արտահանող որևէ այլ երկրի դեպքում: Այդ երկրները բազմաթիվ են, գտնվում են տարբեր աշխարհամասերում և իրենց բնորոշ տնտեսական առանձնահատուկ պայմաններն ունեն: Մյուս կողմից թեման ուսումնասիրում է երկրի արտադրանքներից մեկի արտահանման և ոչ թե նավթ արտահանող երկրի շրջանակը: Սովորաբար, այդ երկրները համարվում են միատեսակ արտադրանք ունեցող երկրներ և նրանց եզակի արտադրատեսակի արտահանումը մեծ դեր է խաղում նրանց տնտեսության մեջ: Միաժամանակ, թեմայի համար սահմանվել և հաստատվել է Իրանի աշխարհագրական տիրույթը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության գլխավոր նպատակն է ուսումնասիրել նավթամթերքի գների ազդեցությունն Իրանի Իսլամական Հանրապետության մակրոտնտեսական ցուցանիշների վրա, կանխատեսել մոտակա ժամանակահատվածում համապատասխան տվյալներն ու դիսկերը և առաջարկել լուծումներ՝ նավթային շուկերը կրկնվելու դեպքում հետևանքները վերահսկելի

դարձնելու ուղղությամբ: Նշված նպատակին հասնելու համար առաջադրվել և հետազոտության ընթացքում լուծվել են հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել տնտեսական պատժամիջոցներին նախորդող և հաջորդող շրջաններում նավթային հասույթներից Իրանի պետական բյուջեի կախվածությունը:

2. Ուսումնասիրել տնտեսական պատժամիջոցներին նախորդող և հաջորդող շրջաններում ՀՆԱ-ի վրա նավթային հասույթների ազդեցությունը:

3. Ուսումնասիրել տնտեսական պատժամիջոցներին նախորդող և հաջորդող շրջաններում Իրանում սղաճի վրա նավթային հասույթների ազդեցությունը:

4. Սահմանել նավթային եկամուտների և կառավարության ծախսումների միջև փոխկապակցվածությունը:

5. Սահմանել նավթային եկամուտների և ՀՆԱ-ի փոխկապակցվածությունը:

6. Սահմանել նավթային եկամուտների և սղաճի փոխկապակցվածությունը:

7. Մշակել և առաջադրել այնպիսի մոդել, որը կկրճատի տնտեսական պատժամիջոցներին նախորդող և հաջորդող շրջաններում նավթից կախվածությունն Իրանում:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Սույն հետազոտության առարկան է նավթամթերքի գների ազդեցության ուսումնասիրումն Իրանի մակրոտնտեսական ցուցանիշների վրա: Հետազոտության օբյեկտ են հանդիսացել 2000-2016 թթ. կտրվածքով (Արևմուտքի կողմից տնտեսական սանկցիաների կիրառմանը նախորդող և հաջորդող ժամանակահատվածներում) նավթային եկամուտների կրճատման հետևանքով Իրանի մակրոտնտեսական ցուցանիշներում, այդ թվում՝ պետական բյուջեում, ՀՆԱ-ում և սղաճում, գրանցվող վնասների կանխարգելման նպատակով մշակվող ծրագրերն ու իրականացվող քայլերը:

Հետազոտության գիտական արդյունքները և նորույթը: Սույն հետազոտության շրջանակներում բացահայտվել է ուսումնասիրվող ժամանակահատվածում երկու խոշոր նավթային շուկերի ազդեցությունն Իրանի տնտեսության, այդ թվում՝ պետական բյուջեի, ՀՆԱ-ի և սղաճի վրա: Նավթի գնի փոփոխությունների անակնկալ, ոչ օրինաչափ և անկանխատեսելի տատանումները, կարող են առանձնահատուկ ազդեցություն ունենալ երկրի տնտեսության վրա՝ ելնելով նավթային եկամուտներից պետական բյուջեի (55%), արտահանումների (80%) և ՀՆԱ-ի (25%) մեծ կախվածությունից:

Հետազոտության գիտական նորույթը ձևակերպվել է հետևյալ կերպ.

1. Ներկայացված հայեցակարգային մոդելով վերլուծվել և գնահատվել են երկու նավթային շուկերը (*համաշխարհային և Իրանի մասշտաբով*), և այդ շուկերի պայմաններում նավթային եկամուտների ազդեցությունն Իրանի մակրոտնտեսական բնութագրերի (պետեկամտի, ՀՆԱ-ի և սղաճի) վրա:

2. Բացահայտվել է նավթ արտահանող երկրների շարքում Իրանի առանձնահատուկ տեղն ու դերը՝ գնահատելով նավթային սանկցիաների ազդեցությունն Իրանի տնտեսության վրա:

3. Հետազոտության արդյունքների հիման վրա մշակվել է ոլորտի հետագա զարգացման ուղեցույց, հիմք ընդունելով վերլուծության հիման վրա կատարված կանխատեսումները:

Հետազոտության տեսական և կիրառական նշանակությունը:

Սույն հետազոտության արդյունքում պարզ են դառնում երկրի մակրոտնտեսական գործոնների թույլ կողմերը, որոնց ցանկացած փոփոխություն խիստ կարևոր է հասարակության և կառավարության համար: Աշխատանքը կարևորվում է նաև նավթային սանկցիաներով և ճգնաժամով պայմանավորվող վնասների կանխարգելման տեսանկյունից, իսկ ստացված արդյունքներն իրազեկում են իշխանությանը և նավթի, ինչպես նաև տնտեսության ու ֆինանսների գծով նախարարությունների պատասխանատուներին՝ նավթի արտահանման բացակայության դեպքում խնդիրների կրկնությունը բացառելու ուղղությամբ անհրաժեշտ քայլեր նախաձեռնելու նպատակով: Հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել բոլոր այն երկրների համար, որոնց հիմնական եկամուտն ապահովվում է նավթի արտահանումից կամ եզակի արտադրանքի հաշվին: Չափազանց կարևորվում է հետազոտության ժամանակային ու տարածքային ընդգրկվածությունը և համաշխարհային ներկա պայմանների հետ համահունչ լինելու հանգամանքը:

Թեման կարևոր է նաև ծրագրեր մշակողների համար, որպեսզի նավթային եկամուտների ընդհատման դեպքում, համապատասխան ճգնաժամերը դիմագրավելու նպատակով անհրաժեշտ քայլերի վերաբերյալ բազմաթիվ ծրագրեր մշակվեն:

Սույն հետազոտության արդյունքներով կարելի է նավթային եկամուտների կրճատմամբ պայմանավորված որոշակի խնդիրների ծագման դեպքում հարմար լուծումներ առաջադրել սղաճի, գործազրկության, տնտեսական աճի, ՀՆԱ-ի և պետական բյուջեի հետ առնչվող հարցերում:

Հետազոտության մեթոդաբանությունը:¹ Աշխատանքում առաջնորդվել ենք հետևյալ մեթոդաբանությամբ. գրականության, վիճակագրական տվյալների և փորձառական (էմպիրիկ) հետազոտությունների արդյունքների ուսումնասիրում, նախկին տեղեկատվության և տվյալների համադրում, նախագծերի ուսումնասիրումը թեմայի տեսանկյունից, կազմակերպված հետազոտություն և առաջին ձեռքից ստացված տվյալների համադրում ու վերլուծություն, պարբերականների և կայքէջերի ուսումնասիրում:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության արդյունքները քննարկվել են ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի Ֆինանսահաշվային ամբիոնի նիստում: Ատենախոսության թեմայով հրապարակվել են 5 գիտական հոդվածներ:

¹ Հաշվի առնելով, որ Իրանում բոլոր վիճակագրական տվյալները ներկայացվում են արեգակնային տոմարով, որն ամիսների քանակի 9/3 հարաբերակցությամբ է համընկնում մ.թ. մեկ տարվան, օրինակ՝ արեգակնային տոմարով 1396 թ. առաջին 9 ամիսները համընկնում են 2017 թ., իսկ վերջին 3 ամիսները՝ 2018 թ., ապա ատենախոսության տեքստերում թյուրիմացությունից խուսափելու նպատակով, տվյալ 2017/2018 թ. կտրվածքի փոխարեն պայմանավակնորեն նշվել է ավելի երկար ամիսներ ընդգրկող տարեթիվը (2017 թ.), սակայն աղյուսակներում պահպանվել են 9/3 հարաբերակցության պատկերով տարեթիվերը: Այդպիսով, երբ խոսվում է 1396 թ. մասին, նկատի ունենք 2017/2018 տասներկու ամիսների կտրվածքը, որը տեքստում պայմանականորեն կարճ նշվում է՝ 2017 թ.:

Հետազոտության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածություն- նից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից (107 աղբյուր) և հավելվածից: Աշխատանքը շարադրված է 134 էջում (ներառելով գրականության ցանկը) և պարունակում է 9 գծապատկեր, 56 աղյուսակ և 1 սխեմա:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության առարկան և օբյեկտը, նպատակն ու խնդիրները, տեսական և մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը և ստացված արդյունքների գործնական ու կիրառական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Իրանի նավթային տնտեսության պատմությունը և արդի վիճակը» գլխում անդրադառնալով Իրանի նավթի արդյունահանման նախապատմությանը և ժամանակակից նավթարդյունաբերության ձևավորմանը, մանրամասն խոսվել է նավթի կապակցությամբ Իրանի զարգացման ծրագրերի մասին, ուսումնասիրվել է նավթի գնի ազդեցությունն Իրանի մակրոտնտեսական ցուցանիշների վրա, ապա նկարագրվել են նավթի արտադրությունը, սպառումն ու արտահանումն աշխարհում և Իրանում՝ 2001-2016 թթ. կտրվածքով:

Համաշխարհային երկրորդ պատերազմից ի վեր, նավթն Իրանի տնտեսության մեջ ունի կենսական կարևոր նշանակություն և 1979 թ. իսլամական հեղափոխությունից հետո նավթային տնտեսությունից ազատվելու և երկրի տնտեսությունը դիվերսիֆիկացնելու ուղղությամբ ներդրված ջանքերը միանշանակ հաջողություն չունեցան: Ներկայումս երկրի արտաբժույթի եկամտի զգալի հատվածը և կառավարության հանրային բյուջեի աղբյուրներն ապահովվում են նավթի արդյունաբերության և արտահանման շնորհիվ, իսկ ՀՆԱ-ում կարևորվում են նավթի ու բնական գազի մասնաբաժինները: Հանրային փորձը ցույց է տվել, որ նավթի ու բնական գազի արտադրության և արտահանման պատճառով եկամուտների տատանումներն ունեն նշանակալի ազդեցություն մակրոտնտեսական ցուցանիշների վրա:

Առաջին գլխի առաջին ենթաբաժնում ուսումնասիրվել են Իրանի զարգացման ծրագրերը նավթի կապակցությամբ, որի շրջանակներում անդրադարձ է կատարվել կառավարության չափերին, օտարերկրյա ուղղակի ներդրումներին և տնտեսական աճին: Աղյուսակ 1-ում Իրանի զարգացման ծրագրերի ֆինանսավորման գործում նավթի հասույթների դերակատարությունը ներկայացնելու նպատակով, ընդհանուր գումարը համեմատվել է յուրաքանչյուր ծրագրում նավթի մասնաբաժնի տոկոսային պատկերով²:

² Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ ըստ հետևյալ աղբյուրում ամփոփված տվյալների.
Oree K., The Economics of mine, Ferdousee university, Meshhad, 1381 (2002/03), 190 p.

Աղյուսակ 1.

Չարգացման ծրագրերի տվյալների համեմատությունը և նավթի մասնաբաժինը յուրաքանչյուր ծրագրում (մլրդ դոլար)

Ծրագրեր	Կառավարության հասույթները	Նավթի մասնաբաժինը	%
Առաջին ծրագիրը	21	8	37
Երկրորդ ծրագիրը	94	61	65
Երրորդ ծրագիրը	232	153	66
Չորրորդ ծրագիրը	610	385	63
Հինգերորդ ծրագիրը	829	662	79

Առաջին գլխի երկրորդ ենթաբաժնում ուսումնասիրվել է Նավթի գնի ազդեցությունն Իրանի մակրոտնտեսական ցուցանիշների վրա:

Միջին հաշվով, անցյալ 20 տարիների ընթացքում, ՀՆԱ-ի 16%-ը կախված էր նավթի եկամտից, որի հետևանքով կրճատվեցին հանրային նախաձեռնությունները: Նավթի ամենակարևոր գործառույթը կայանում է նրանում, որ պետության արժույթի 85%-ն անխուսափելիորեն ստացվում է նավթի վաճառքից, հետևաբար այլ տնտեսական ոլորտներն իրենց ներմուծման պահանջարկը բավարարելու համար, մատակարարվող 98% էներգիային զուգահեռ, կախման մեջ են նաև նավթի վաճառքից: Նավթի արտահանման ոլորտում թերացումները կամ ներքին շուկայում թերի օգտագործումն իր ազդեցությունն է թողնում ընդհանուր բյուջեի վրա, հետևաբար պետության տնտեսական ճգնաժամը կամ զարգացումը մեծապես կախված է նավթից:

Իրանին հարկավոր է նավթարդյունաբերության մեջ կատարել ներդրումներ, որպեսզի համաշխարհային շուկայում և ՕՊԵԿ-ում երկիրը հնարավորություն ունենա պահպանելու իր դիրքը:

Հիմք ընդունելով պատմական փորձը, նավթի եկամուտները չպետք է մեծ տատանումների ենթարկվեն, հակառակ դեպքում 2008 և 2009 թթ. շուկային տնտեսության ականատեսը կլինենք: Հետևաբար կկրճատվեն եկամուտներն ու կբարձրանան հանրային ապրանքների գները:

Երրորդ ենթաբաժինը նվիրված է աշխարհում և Իրանում 2001-2016 թթ. նավթի արտադրության, սպառման ու արտահանման տվյալների համեմատական քննարկմանն: Վերլուծություններից պարզ է դառնում, որ արեգ. տոմարով 1379 (2000/01) թ.-ից ի վեր նավթի արտադրությունն (3.8 մլն բարել/օր) աճի միտում է գրանցել, մինչև 19.03.1389 թ. (2010 թ. հունիսի 9-ին) ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի կողմից թիվ 1929 բանաձևի շրջանակներում, միջուկային գործունեության պատճառով, իրանական մի շարք բանկերի և Իրանի նավթի արտահանման նկատմամբ սանկցիաների կիրառումը, որը հանգեցրեց ազգային արժույթի արժեզրկմանը, ոսկու և արտարժույթի շուկայում տատանումներին, նավթային եկամուտների նվազման հետևանքով որոշակի հնարավորությունների կրճատմանը, շինարարական նախագծերի դադարեցմանը և այլն: Իսկ 1391 (2012/13) թ. Իրանը ենթարկվեց երկու նավթային շուկերի՝ 1) նավթի գնի նվազում, 2) նավթի արտահանման

և իրացման հնարավորությունից իրանի զրկվելը: Իրանի նավթի արտադրությունը, որը մինչ այդ կազմում էր 4.3 մլն բարել/օր, նվազեց մինչև օրական 3.7 մլն բարելի, և այդ կրճատումը շարունակվել է նույնիսկ մինչև 2017 թ. սեպտեմբեր ամիսը:

Տասնամյա կտրվածքով նավթի սպառումը մնացել է գրեթե անփոփոխ, որի պատճառը նավթամթերքները գազով փոխարինվելն էր, սակայն նավթի արտահանումը մինչև 1388 (2009/10) թ. շարունակվել է 2.4 մլն բարել/օր ծավալով, և 1389 (2010/11) թ., երբ Իրանի նավթի նկատմամբ սանկցիաների օրենքն ընդունվեց, հորատման տեխնիկաների և նավթային ոլորտի սարքավորումների հայթայթման խնդիրը դժվարությունների բախվեց և 1389 (2010/11) թ. արտահանումները կրճատվեցին օրական 2, իսկ 1393 (2014/15) թ. նույնիսկ՝ 1.4 մլն բարելի: 2016 թվականից սկսած, երբ հանվեցին սանկցիաները, նավթի արտահանումների ծավալն ավելանալով հասավ՝ օրական 1.6, 1395-ին (2016/17)՝ 2.2, իսկ 2017 թ. սեպտեմբերին՝ 2.7 մլն. բարելի, որը հավասար էր 17 տարի առաջ՝ 1379 (2000) թ. ծավալներին:

Իրանի նավթի արտահանման եկամուտների տիրույթը 1379 (2000/01) թվականից մինչև 1384 թ. եղել է տարեկան 24-ից 53 մլրդ ԱՄՆ դոլար, որը 1385 (2006/07) թ. նավթի գնի աճով պայմանավորված, 1383 թվականից մինչև 1386 (2007/08) թ. մեկ բարելի դիմաց 34 ԱՄՆ դոլարից հասել է 60-ի, որի պատճառներից մեկն Օբամայի նախագահության շրջանում 2007-2009 թթ. ԱՄՆ տնտեսական ճգնաժամն էր, որի արդյունքում բարձրացավ նավթի գինը: 2009 թ. նավթի համաշխարհային գինը կրկին նվազեց, սակայն հաջորդ տարում (2010 թ.) բարձրանալով, արդեն իսկ 2011 թ. հասավ 110 ԱՄՆ դոլարի՝ մեկ բարելի հաշվով: Նավթի գնի բարձրացման շուրջ հանգեցրեց արտահանող երկրների եկամուտների աճին: Միաժամանակ նաև սկիզբ առան Իրանի նավթի իրացման նկատմամբ համաշխարհային սանկցիաները և նավթի գնի կրճատումը: 1391 (2012/13) թ. այն նվազեց 50 տոկոսով, հասնելով մեկ բարելի դիմաց 50 ԱՄՆ դոլարի:

Իրանը նավթի համաշխարհային գնի նվազման հետ մեկտեղ նաև բախվեց նավթի իրացման հարցում սանկցիաների շուկին և երկրի նավթային եկամուտները 1390 (2011/12) թ. 119 մլրդ ԱՄՆ դոլարից հանկարծակի կրճատվեց 68-ի, ապա 55 և 33-ի՝ 1391-1394 թթ., որն Իրանի նավթի նկատմամբ սանկցիաների շրջանն էր, իսկ 1395 (2016/17) թ., երբ հանվեցին սանկցիաները, Իրանի եկամուտը կազմեց 55.8, և մինչև 2017 թ. սեպտեմբերը՝ 30 մլրդ ԱՄՆ դոլար:

Եվ քանի որ սանկցիաների կիրառման ժամանակաշրջանում անհնար էին նավթային ոլորտի սարքավորումների գնումները, հետևաբար, արտադրությունը տեխնիկապես խնդիրների հետ առնչվեց, և ներկա դրությամբ, կառավարությունը փորձում է, որպեսզի 2018 թ. նավթի արտադրությունը հասցնել օրական ավելի քան 4, իսկ արտահանումներն՝ ավելի քան 3 մլն բարելի:

Ատենախոսության երկրորդ՝ «Նավթային հասույթների գնահատումը մակրոտնտեսական ցուցանիշների կառուցվածքում» գլխում վերլուծության են ենթարկվել նավթային հասույթների, բյուջեի և կառավարության դերակատարության

միջև կապը, նավթային հասույթների և ՀՆԱ-ի միջև կապը, ինչպես նաև համախառն ազգային արտադրանքի (ՀԱԱ) փոփոխականները:

Հետազոտության փոփոխականներն են՝ կառավարության հասույթին համարժեք ոչ ֆինանսական միջոցների օտարումը, կառավարության վճարները, գործող հաշվեկշիռը, ոչ ֆինանսական միջոցների ձեռքբերումը, ոչ ֆինանսական միջոցների օտարումն ու բացարձակ օտարումը, գործող և ոչ ֆինանսական հաշվեկշիռը, ֆինանսական միջոցների օտարումն ու բացարձակ օտարումը, որոնց տվյալները հավաքագրվել են Իրանի Կենտրոնական Բանկից: Փոփոխականների միջև առկա կապերը վերլուծելու նպատակով օգտագործվել են՝ Պիրսոնի կորելացիոն գործակիցը, ոչ ֆինանսական միջոցների օտարման ազդեցության կանխատեսումն այլ ուսումնասիրվող փոփոխականների վրա և գծային ռեգրեսիոն մեթոդը: Սույն ուսումնասիրության ամփոփումը մատնանշում է, որ ոչ ֆինանսական միջոցների օտարումը նշանակալիորեն կապված է կառավարության հասույթի, կառավարության վճարների, գործող հաշվեկշիռի, ոչ ֆինանսական միջոցների ձեռքբերման և ոչ ֆինանսական միջոցների բացարձակ օտարման հետ: Ինչպես կանխատեսվել է, նշանակալի է ոչ ֆինանսական միջոցների բացարձակ օտարումը, սակայն վիճակագրական տեսանկյունից նշանակալի չէ ֆինանսական միջոցների բացարձակ օտարումը:

Վիճակագրական փաստերը վկայում են այն մասին, որ իրանական տնտեսության մեջ նավթային հասույթները, որոնք ունեցել են հաճախակի տատանումներ, համարվել են դեռևս ամենակարևոր դերակատարությունն ունեցող ազդող գործոնը կառավարության ծախսերի վրա, հետևաբար կառավարության բյուջեն և դրա ծախսերն ընդհանուր պահանջարկի վրա ազդող նավթային ամենանշանակալի ցնցումների ուղետարներից են համարվում: Այն դեպքերում, երբ չեն նախագծվել կառավարության բյուջեի կայունացման մեխանիզմները, նավթային ցնցումները չափազանց մեծ ազդեցություն են թողնելու կառավարության բյուջեի վրա:

Աբասյանն ու Խաթամին սահմանել են հարկերի օպտիմալ ուղի՝ նավթի հասույթներից կառավարության բյուջեի կախվածության կրճատման շնորհիվ³: Սույն հետազոտության մեջ, օգտվելով Բելլմանի հավասարումներից, օպտիմալ ուղի է սահմանվել նավթի հասույթներից կառավարության բյուջեի կախվածության կրճատման համար:

Աշխատանքում կարևորելով կառավարության բյուջեն ու ֆինանսական վիճակը, և ապա՝ հանրային բյուջեի կախվածությունը նավթից, մանրամասնել ենք հետազոտվող ժամանակահատվածի համապատասխան տվյալները:

Սահմանված նպատակի վրա հիմնված սույն հետազոտությունն իր բնույթով նկարագրական և կորելատիվ ուսումնասիրություն է: Տվյալները վերցված են Իրանի Կենտրոնական Բանկից 1382-1392 (2003-2013) թթ. ժամանակահատվածի համար, որոնք օգտագործվել են ոչ ֆինանսական միջոցների օտարման և կառավարության

³ Abbasian Ezzatollah and Khatami Tayebah, Determination of the optimum path of taxes for reduction of governmental budget dependence to oil revenues, Quarterly Journal of Quantitative Economics, Vol 9, No 1, 2012, pp. 87-111

հասույթի, կառավարության վճարների, գործող հաշվեկշռի, ոչ ֆինանսական միջոցների ձեռքբերման, ոչ ֆինանսական միջոցների բացարձակ օտարման արժեքի, գործող և ոչ ֆինանսական հաշվեկշռի, ֆինանսական միջոցների օտարման և ֆինանսական միջոցների բացարձակ օտարման արժեքի միջև գոյություն ունեցող կապի վերլուծության նպատակով: Ի վերջո, տվյալների վերլուծության համար օգտագործվել են Պիրսոնի կորելացիոն թեստն ու գծային ռեգրեսիոն մեթոդը:

Ռեգրեսիոն վերլուծության միջոցով ստացված արդյունքները ցույց են տալիս, որ կառավարության ոչ ֆինանսական միջոցների օտարման ազդեցությունը նշանակալիորեն որոշիչ է կառավարության հասույթների կանխատեսման գործում, իսկ կառավարության ոչ ֆինանսական միջոցների օտարումը նշանակալիորեն որոշիչ չէ գործող և ոչ ֆինանսական հաշվեկշիռը կանխատեսելու համար:

Շարունակելով հետազոտվող ժամանակահատվածում կառավարության ֆինանսական վիճակի մանրամասն նկարագրումը, ներկայացվել է պետեկամուտների և պետական ծախսերի փոփոխության ու նավթից կախվածության, ինչպես նաև ընդհանուրի նկատմամբ յուրաքանչյուր գործոնի մասնաբաժնի վերաբերյալ վերլուծությունը, որի արդյունքում պարզ է դառնում, որ 1387 (2008/09)-1395 (2016/17) թթ. առավելագույն կախվածությունը՝ 53%, պատկանում է 1389 (2010/11) թ., իսկ նվազագույնը՝ 1388 (2009/10) թ.՝ 25.2%:

Սանկցիաների ժամանակաշրջանում նավթային եկամուտների կրճատումը միաժամանակ հետևյալ երեք գործոնների հետ էր զուգորդվում.

1. Իրանի նավթի վաճառքի նկատմամբ սանկցիաներն՝ ըստ 2010 թ. հունիսի 9-ի ՄԱԿ ԱԽ թիվ 1929 բանաձևի,

2. սանկցիաներով պայմանավորված նավթի արտահանման կրճատումը, որը սանկցիաներին նախորդող շրջանի օրական 2.4 մլն բարելից հասավ՝ 1.4 մլն-ի,

3. նավթի համաշխարհային գնի նվազում, ըստ որի, 1390 (2011) թ. 140 ԱՄՆ դոլար/բարելից 1395 (2017) թ. հասել է 40 ԱՄՆ դոլարի:

Հետևաբար, կառավարության առջև ծառանում է եկամուտների կրճատման խնդիրը, և ճարահատյալ, ավելացնում է հարկային եկամուտները և կրճատում կապիտալ ներդրումները:

Ոչ նավթային (հարկային) եկամուտները 1391 (2012/13) թ. (որը սանկցիաների և նավթի գնի նվազման գագաթնակետն էր) ընդհանուր եկամտի համեմատ կազմել են կառավարության ընդհանուր եկամուտների 57 տոկոսը, և լճացման պայմաններում հայտնվեցին կապիտալ ներդրումների նախագծերը, կառավարության ընդհանուր ծախսերից նրանց մասնաբաժինը հասնելով 14.6%-ի, ինչը սովորական տարիներին առհասարակ կազմել է կառավարության ընդհանուր ծախսերի 25%-ը:

Մյուս կողմից կառավարության ընթացիկ ծախսերը 1387 (2008/09) թ. ընդհանուր ծախսերի 72%-ից 1394 (2015/16) թ. (սանկցիաների վերջին տարում) հասնում է 86%-ի:

Կառավարության ֆինանսական վիճակի ուսումնասիրությամբ պարզ է դառնում, որ կառավարություններն ամեն տարի առնչվում են օպերատիվ ու կապիտալ բնույթի

բացասական հաշվեկշռի հետ, որի հատուցման համար քայլեր են ձեռնարկում Կենտրոնական Բանկից փոխառություններ ստանալու ուղղությամբ, ինչն էլ երկրում ավելացնում է սղաճը: Եվ կառավարության միակ ելքը՝ ընթացիկ ծախսերի կրճատումն է և ոչ նավթային եկամուտների ավելացումը:

Նավթային հասույթների և ՀՆԱ-ի միջև կապի վերլուծության շրջանակներում, ներկայացվել են եկամուտներն ու ՀՆԱ-ն՝ ըստ տնտեսական ակտիվության (1390 (2011/12) թ. հաստատուն գներով), ըստ որի, առանձնացվել են հետազոտվող տարիները՝ նավթի գնի փոփոխման շոկերի և Իրանի նկատմամբ նավթային սանկցիաների կիրառման ու չեղարկման շոկերի համաձայն, և վերլուծվել են դրանց ազդեցությունը՝ նավթի, գյուղատնտեսության, հանքարդյունաբերության, ծառայությունների խմբերի վրա, միաժամանակ ներկայացնելով նաև ՀՆԱ-ն բազային գնով (ներառելով նավթը), ՀՆԱ-ն բազային գնով (առանց նավթի) և ընդհանուր ՀՆԱ-ում նավթի մասնաբաժինը: Ըստ արդյունքների, նավթի խմբում յուրաքանչյուր 5 միավորի փոփոխությունը մեկ միավորով ազդում է տնտեսական աճի վրա:

Աղյուսակ 2-ում ամփոփված են ՀՆԱ բազային գներն՝ ըստ տարիների: Ինչպես նկատվում է, 2005 թ. 3 տոկոսով ավելացել է նավթի մասնաբաժինը, որը պայմանավորված էր նավթի մեկ բարելի համաշխարհային գնի բարձրացմամբ, ինչը շարունակվեց մինչև 2011 թ.: 2010 թ. նշված ցուցանիշը նախորդ տարիների համեմատ ընդհանուր ՀՆԱ-ի նվազագույն մասնաբաժինն է գրանցել (70%), և համապատասխանաբար՝ նախորդ տասնամյակների կտրվածքով նավթի առավելագույն մասնաբաժինը (30%), որը պայմանավորված էր կրկին նավթի գնի բարձրացմամբ: 2011 թ. ՀՆԱ բազային գինը (բացառելով նավթը) գրանցելով 33.5% աճ, նախորդ տարվա ընթացքում և մինչև 2015/16 թ. (1394 թ.) համարվել է նախորդ տարվա համեմատ աճի առավելագույն ցուցանիշը:

Իրանի ՀՆԱ-ի բազային գները՝ 2000/01-2016/17 թթ. կտրվածքով⁴

Տարի		ՀՆԱ բազային գինը		ՀՆԱ բազային գինը (բացառելով նավթը)	
Արեգ. տոմար.	Մ.թ.	Մլրդ ԻԻՀ դիալ	Աճը նախորդ տարվա համեմատ, %	Մլրդ ԻԻՀ դիալ	Աճը նախորդ տարվա համեմատ, %
1379	2000/01	576493	32.7	474788	28
1380	2001/02	664620	15.3	564229	18.8
1381	2002/03	916465	37.9	706380	25.2
1382	2003/04	1095716.9	19.6	843573	19.4
1383	2004/05	1384819	26.4	1038145	23
1384	2005/06	1691814	22.2	1220294	17.5
1385	2006/07	2038432	20.8	1498341	23.2
1386	2007/08	2890347	27.9	2084361	26.5
1387	2008/09	3378724	18.1	2528082	23
1388	2009/10	3562289	5.4	2833007	12
1389	2010/11	4300531	21.4	3326466	17.4
1390	2011/12	6104868	41.8	4441247	33.5
1391	2012/13	7091389	13.5	5926676	26.6
1392	2013/14	9343070	31.8	7753400	3.8
1393	2014/15	10807500	15.8	9158000	18.1
1394	2015/16	11129	-1.2	10088	3.7
1395	2016/17	12723	14.3	11159	10.6

Ինչ վերաբերում է համախառն ազգային արտադրանքի (ՀԱԱ) փոփոխականների վերլուծությանը, աղյուսակ 3-ը ցույց է տալիս, որ հետազոտության փոփոխականների առավելագույն միջին նիշը պատկանում է Y1 (գյուղատնտեսություն) փոփոխականին, իսկ նվազագույն միջակայքը՝ Y5 և Y1-ին (ոչ նավթային համախառն ներքին արտադրություն (բազային գնով) և գյուղատնտեսություն):

⁴ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ ամփոփելով աշխատանքում հղում արված վիճակագրական աղբյուրների համապատասխան տվյալները [Central bank of Iran, Annual Review: 2001/02-2016/17 (1379-1395)]:

Աղյուսակ 3.

Հետազոտության փոփոխականների մասին վիճակագրական տեղեկատվության գնահատում⁵

Փոփոխականներ		Միջինացված /Average/	Միջին /Middle/	Ստանդարտ թերություն	Միջակայք
Գյուղատնտեսություն	Y1	198632.66	165681	120848.89	371554
Արդյունաբերություն և հանքարդյունաբերություն	Y2	352022.33	264119	250122.99	756252
Ծառայություններ	Y3	957380.41	734084	677641.83	1969705
Համախառն ներքին արտադրանք (բազային գնով)	Y4	1911496.25	1538316.5	1316958.35	3869879
Ոչ նավթային համախառն ներքին արտադրություն (բազային գնով)	Y5	2374109.5	1268243	3257741.59	11849202
Համախառն ազգային արտադրություն (բազային գնով)	Y6	1898414.5	1525413	1307007.3	3864438
Ազգային եկամուտ	Y7	1716102.5	1341325	1197537.23	3483216
Նավթ	X	454053.41	409096.5	323761.72	914506

Առկա է նշանակալի կապ տարիների և ուսումնասիրվող փոփոխականների միջև: Վերոնշյալ վարկածը հաստատելու նպատակով, օգտագործվել է միջ-սուբյեկտային միակողմանի վարիացիայի վերլուծության ցուցանիշային թեստը (inter-subject one-way variance analysis parametric test):

Ատենախոսության երրորդ՝ «Սղաճի վրա նավթային հասույթների ազդեցության գնահատումը» գլխում վերլուծության են ենթարկվել նավթային հասույթների ազդեցությունը հիմնական ցուցանիշների վրա, ապա ուսումնասիրվել են նավթային ոլորտի զարգացման խնդիրներն ու հեռանկարները:

Ըստ ուսումնասիրության անհրաժեշտության, նախ սահմանվել են հաշվարկների համար հիմք հանդիսացող գնի չորս ցուցանիշները՝ 1) սպառողական ապրանքների և ծառայությունների գնի ցուցանիշը (CPI /Consumer Goods and Services Price Index/), 2) մեծածախ գնի ցուցանիշը (WPI /Wholesale Price Index/), 3) արտադրողի գնի ցուցանիշը (PPI /Producer Price Index/), 4) արտահանման գնի ցուցանիշը (XPI /Export Price Index/):

Հաշվի առնելով, որ նշված գնի ցուցանիշներն սկսած արեգակնային տոմարով 1387 (2008/09) թվականից կիրառվել են երեք տարբերակով (CPI, PPI, XPI), ապա

⁵ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից:

առանձին երկու հատվածով է իրականացվել ուսումնասիրությունը՝ ա) **(1384-1387 (2005/06-2008/09) թթ. և բ) 1388-1395 (2009/10-2016/17) թթ.** կտրվածքով:

- *Իրանում գնի չորս ցուցանիշների փոփոխությունների վերլուծության ամփոփումը՝ 1384-1387 (2005/06-2008/09) թթ. կտրվածքով*

1384 (2005/06) թ. նախորդ տարվա համեմատ կրճատվել են գնի ցուցանիշները, և այդ կրճատումը պայմանավորված է եղել արտարժույթի փոխարժեքի հարաբերական կայունությամբ, բնակարանային շուկայի լճացմամբ, դրամի հոսքի (velocity of money) արագության նվազմամբ, ներմուծվող մրգերի մաքսային սակագների կրճատման և բնակլիմայական բարենպաստ պայմանների պատճառով գյուղատնտեսական և սպառողական արտադրանքի ներմուծմամբ, իսկ 1385-1387 (2006/07-2008/09) թթ. յուրաքանչյուր տարվա ցուցանիշները նախորդ տարվա համեմատ ավելացել են, որի հիմնական պատճառը համաշխարհային գների, բնակարանի, էներգակիրների, էլեկտրաէներգիայի, սպառողական ապրանքների, արդյունաբերական, հանքային արտադրատեսակների և լարերի ու մալուխների գների բարձրացումն էր: 1388 (2009/10) թ. կանխիկի աճի վերահսկման, սպառողական, հանքային ու քիմիական ապրանքների գների կրճատման մասին քաղաքականությունների որդեգրման շնորհիվ նվազեցին ցուցանիշները, որը կարճատև երևույթ էր մինչև 1389 (2010/11) թ., երբ ընդունվեց սուբսիդիաների վճարման օրենքը և կառավարությունը պարտավորվեց իրանցի յուրաքանչյուր քաղաքացու վճարել ամսական 425000 դիալ (տվյալ ժամանակահատվածի փոխարժեքով՝ 1 անձին ամսական 42 ԱՄՆ դոլարին համարժեք), և որոշվեց հանել նաև բոլոր ապրանքատեսակների սուբսիդիաները: Հետևաբար, գներն ավելացան հետևյալ կերպ՝ գազը 218%, էլեկտրաէներգիան 193%, դիզվառեղիքը 235%, կերոսինը %, ինչն էլ հանգեցրեց ընտանիքների եկամուտների և աշխատավարձերի ու ծառայությունների աճին, և հետևաբար՝ սպառողական ապրանքների գնի (CPI), արդյունաբերական ու գյուղատնտեսական արտադրանքների արտադրության գնի ու ինքնարժեքի (PPI), ինչպես նաև արտահանվող ապրանքների ցուցանիշի (XPI) բարձրացմանը:

1384-1390 (2005/06-2011/12) թթ. նավթի համաշխարհային շուկայի թանկացման շրջանն էր, որից ելնելով էլ գնի ցուցանիշները բարձրացան և պրն. Ահմադինեժադի կառավարությունն ահռելի եկամուտներ ունեցավ:

1391 (2012/13) թվականից ի վեր նվազեց նավթի համաշխարհային գինը, սկիզբ առան արտարժույթի գնի մեծ չափազանց տատանումներ և ԱՄՆ դոլարի փոխարժեքը բարձրացավ մինչև նույնիսկ 45000 դիալի, ինչը մինչ օրս գրանցված ամենաբարձր գինն էր: Այսպիսով, պատժամիջոցների նոր շրջան մուտք գործելու, նավթի մեկ բարելի գնի նվազման, և արդյունքում արտարժույթային եկամուտների զգալի կրճատման, շուկայի ռեսուրսներից մի մասի շրջափակման (բլոկադայի) ենթարկվելու և արտարժույթի վերահսկման թերի կառավարման հետ մեկտեղ, արեգակնային տոմարով 90-ականներին ԱՄՆ դոլարի փոխարժեքը բարձրացավ ավելի քան 400%-ով, որն էլ հանգեցրեց արտահանումներից արտարժույթային եկամուտներ ստացող ընկերությունների կողմից արտարժույթի վաճառքին, և արդյունքում թափ առավ

արտահանման ոլորտը, հետևաբար, մեծ թափով աճեցին CPI, PPI և XPI ցուցանիշները: 1393 (2014/15) թ. արտարժույթի շուկայի վերահսկմամբ ու կայունացմամբ, արժուրթային կարգապահության բարձրացմամբ և համաշխարհային գների նվազմամբ CPI և PPI ցուցանիշներն անկում ապրեցին, սակայն 1392 (2013/14) թվականից սկսած XPI ցուցանիշը խստացված պատժամիջոցների և նավթի արտահանման կրճատման, և արդյունքում՝ արտարժուրթային եկամուտների կրճատման, բանկերի շրջափակման և արտասահմանում Իրանի ֆինանսների բլոկադայի ենթարկվելու պատճառով սկսեց նվազել, որի կրճատման հիմնական գործոնները նավթաքիմիական ու կաշվե արտադրանքներն էին:

Ինչ վերաբերում է կորելացիոն կապի հաշվարկներին, ապա՝

1) կորելացիոն առավելագույն գործակիցը նկատվում է մեծածախ (WPI) և արտադրողի (PPI) գնի ցուցանիշների միջև,

2) իսկ նվազագույնը գրանցվել է սպառողի (CPI) և մեծածախի (WPI) գնի միջև,

3) առկա է միջին չափի կապ սպառողի (CPI) և արտադրողի (PPI) գների միջև:

Առաջին դեպքը բացատրվում է նրանով, որ արտադրողներն իրենց անհրաժեշտ հումքը ձեռք են բերում մեծածախ վաճառողներից, իսկ վերջիններս էլ իրենց ապրանքն իրացնելու նպատակով այն գնում են արտադրողներից: Հետևաբար, փոխանակումների հիմնական մասը, նույնիսկ առանց գումարի և վճարումների, իրականացվում է նրանց միջև:

Երկրորդ դեպքում եթե սպառողների (CPI) համար հասանելի չէ արտադրողը (PPI), նրանք դիմում են մեծածախ վաճառողին: Այստեղ մեծածախից ապրանքը ձեռք բերելու ծախսն ավելի մեծ է քան՝ ապրանքն արտադրողից գնելու տարբերակը:

Երրորդ դեպքում առկա է միջին չափի կապ սպառողի (CPI) և արտադրողի (PPI) միջև: Ծախսերի մասով, կողմերը միջնորդներին (մեծածախ վաճառողներին) փոխանակման գումար չվճարելու նպատակով, նախընտրում են միմյանց հետ գործարք կատարել:

Հայտնի է, որ կորելացիոն գործակիցը վկայում է այն մասին, որ առավել մեծ եկամուտ ապահովելու նպատակով, մեծածախները (WPI) պետք է սպառողների (CPI) մոտ ավելի մեծ վստահություն ստեղծեն, որպեսզի զարգանա նրանց միջև առևտրային կապը, և մեծածախներն (WPI) իրենց շահութաբերության կրճատմամբ, ավելի հաջող կապ հաստատեն սպառողների հետ, ինչը կկանխի սպառողների (CPI) և արտադրողների (PPI) մերձեցումը: Եվ քանի որ բացակայում է PPI-ի և CPI-ի միջև միջնորդավճարը, դա ևս հանգեցնում է նրանց միջև առավել լավ կապի հաստատմանը:

- Իրանում գնի երեք ցուցանիշների փոփոխությունների վերլուծության ամփոփումը՝ 1388-1395 (2009/10-2016/17) թթ. կտրվածքով

1394 (2015/16) թ. սպառողական ապրանքների ու ծառայությունների և արտադրողի գների միջին ցուցանիշները նախորդ տարվա համեմատ աճել են համապատասխանաբար՝ 11.9, 4.9%, իսկ արտահանման ապրանքների գնի ցուցանիշը նվազել է 16%-ով: Նախորդ տարվա թվերի հետ նշված թվերի համեմատությամբ պարզ է դառնում, որ երեք ցուցանիշների աճը նվազման միտում ունեն:

Նշված ժամանակահատվածում սպառողական ապրանքների և ծառայությունների գնի ցուցանիշի (CPI) փոփոխությունների ուսումնասիրմամբ պարզ է դարձել, որ որոշակի գործոնների, այդ թվում՝ արտադրության շուկայի կայունության, սղաճի հետ կապված ակնկալիքների կրճատման, դրամական էքսպանսիայի և համաշխարհային գների անկման պատճառով կրճատվել է սղաճն այդ տարում: Սույն ցուցանիշների միջին փոփոխություններից նկատելի է, որ նախորդ տարվա աճի համեմատ (15.6%), ընթացիկ տարում այն կազմել՝ 11.9%, զիջելով նախորդ տարվա տվյալին:

1394 (2015/16) թ. տվյալներով արտադրողի գնի ցուցանիշն (PPI) աճել է 4.9%-ով, կրկին զիջելով նախորդ տարվա տվյալին (14.8%): Արդյունաբերության խմբի մասնաբաժինն ընդհանուր ցուցանիշի աճից կազմել է 3.8%, որը -0.4 տոկոսով զիջում է նախորդ տարվա տվյալին (9.9%):

1394 (2015/16) թ. արտահանվող ապրանքների գնի միջին ցուցանիշը նախորդ տարվա համեմատ նվազել է 16%-ով: Սույն ցուցանիշի բաղկացուցիչ խմբերից առավելագույն աճ է գրանցվել հանքարդյունաբերական և մորթու ու կաշու արտադրանքների խմբերի դեպքում, համապատասխանաբար՝ 35.8 և 34.4%, իսկ նվազագույնը՝ քիմիական արտադրանքների խմբում (27.1%): Նշված գործոններով է պայմանավորված սույն ցուցանիշի աճի տվյալների կրճատումը⁶:

1395 (2016/17) թ. սպառողական ապրանքների և ծառայությունների գնի ցուցանիշը (CPI) նախորդ տարվա համեմատ փոխվել է 9, իսկ արտադրողի գնի ցուցանիշը (PPI)՝ 5 տոկոսով: Արտահանվող ապրանքների վերաբերյալ տվյալներ չեն հաղորդվել համապատասխան զեկույցում: Սպառողական ապրանքների և ծառայությունների գնի միջին ցուցանիշի եռամսյա (սեզոնային) փոփոխությունների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 1395 (2016/17) թ. նախորդ տարվա համեմատ սեզոնային առավելագույն փոփոխությունը գրանցվել է չորրորդ եռամսյակում /ձմռանը/ (3.4%), նվազագույնը՝ աշնանը (1.6%):

Ամփոփելով սույն ենթաբաժնի վերլուծությունների տվյալները, 1385-1398 (2006/07-2016/17) թթ. գնի ցուցանիշների փոփոխությունների ուսումնասիրմամբ պարզ է դառնում, որ 1385-87 (2006/07-2008/09) թթ., երբ նավթի համաշխարհային գների աճին զուգահեռ նաև Իրանի նավթային եկամուտները 1385 թ. գրանցված 62 մլրդ ԱՄՆ դոլարից հասնում 86.6 մլրդ-ի, սպառողական ապրանքների ու ծառայությունների գնի ցուցանիշն աճելով 13.6-ից հասել է 25.4%-ի, արտադրողի գնի ցուցանիշը՝ 12.2-ից 21.8%-ի, ինչը վկայում է սղաճի վրա նավթային եկամուտների ազդեցության մասին, իսկ արտահանվող ապրանքների դեպքում, ի տարբերություն նշված երկու ցուցանիշների, տարեցտարի կրճատվելով, 17.4-ից հասել է 13.9%-ի, որի պատճառը նավթի արտահանման հսկայական եկամտով պայմանավորված ներմուծումն էր, որն էլ հանգեցրել է արտադրության կրճատմանը:

1388 (2009/10) թ. աշխարհում նավթի գնի կրճատմանը զուգահեռ կրճատվեցին նաև երկրի նավթային եկամուտները, ինչպես նաև գնի բոլոր ցուցանիշները:

⁶ Central bank of Iran, Brief summary of economic developments-1394, Tehran, May, 2017, pp. 39-42.

1389 (2010/11) թ. Իրանում տեղի ունեցան միաժամանակ երեք կարևոր և երկրի սղաճի վրա ազդող իրադարձություններ. դրանք են՝ 1) Իրանի դեմ ՄԱԿ-ի ԱԽ-ի 09.10.2010 թ. թիվ 1929 բանաձևի թողարկումը, որի հիման վար Իրանը ենթարկվեց նավթի իրացման սանկցիաների, 2) նավթի գնի կրկին բարձրացումը, 3) երկրում էներգակիրների վերաբերյալ սուբսիդիաների վերացման հետևանքով յուրաքանչյուր քաղաքացուն ամսական 450000 ԻԻՀ դրամով վճարումն ու էներգակիրների թանկացումը (նշված վճարների առաջին տարում այն համարժեք էր շուրջ 40 ԱՄՆ դոլարի, սակայն 2018 թ. փետրվարի արտարժույթի փոխարժեքի տվյալներով, այն հավասար է 10 ԱՄՆ դոլարի):

Հաշվի առնելով վերոնշյալ երեք հանգամանքները, 1389 (2010/11) թ. սպառողական ապրանքների ու ծառայությունների ցուցանիշի (12.4%), արտադրողի ցուցանիշի (16.6%) և արտահանվող ապրանքի ցուցանիշի (11%) փոփոխությունները 1392 (2013/14) թ. դրությամբ, համապատասխանաբար, հետևյալն են՝ 34.7, 34.5 և 21.8%: Եվ նույնիսկ 2013 թ. սեպտեմբեր ամսին սղաճը կազմեց՝ 40.4%:

1393 (2014/15) թ. սանկցիաների վերացման (մեղմացման) տարին էր և նավթի գնի վերստին անկման սկիզբը, երբ արտարժույթի գնի կայունացմամբ և կանխիկ շրջանառության վերահսկմամբ նվազեցին գների ցուցանիշները:

Գների ցուցանիշների սեզոնային փոփոխությունների ուսումնասիրման շրջանակներում, նկատվում է, որ առավելագույն աճը գրանցվել է 1392 (2013/14) թ. գարնանը՝ 9.3%, ինչպես նաև 1391 (2012/13) թ. աշնանը (11.3%) և ձմռանը՝ 10%:

Տարվա կտրվածքով առավելագույն ծախսերը գրանցվել են մարտ ամսին, որը պայմանավորված է իրանական նոր տարվա և տոնական արձակուրդների հետ, ինչպես նաև ամռանը՝ արձակուրդներին ճանապարհորդելու պատճառով, և ի վերջո, հոկտեմբեր ամսին, որը նոր ուսումնական տարվա կապակցությամբ բնակիչների ծախսերի արդյունքն է: Դրան զուգահեռ նկատվում է նաև սղաճի մակարդակի բարձրացում:

Սպառողական ապրանքների և ծառայությունների գնի ցուցանիշի ուսումնասիրություններն՝ ըստ նահանգների, գյուղերի և մայրաքաղաքի (Թեհրանի), վկայում են այն մասին, որ սղաճի առավելագույն տվյալը գրանցվել է 1392 (2013/14) թ. Ղազվին նահանգի դեպքում՝ 39.2%, իսկ նվազագույնը՝ 1394 (2015/16) թ. Հարավային Խորասան նահանգում՝ 10%, իսկ մայրաքաղաքում 1392 (2013/14) թ. գրանցվել է առավելագույն՝ 32.5%, իսկ 1389 (2010/11) թ.՝ նվազագույն (10.4%) սղաճը:

Գյուղերում առավելագույն սղաճը գրանցվել է 1390 (2011/12) թ., կազմելով 36.5%, իսկ նվազագույնը՝ 1388 (2009/10) թ., որը կազմել է 10.3%:

Հանրապետության տարբեր վայրերում սղաճի փոփոխությունը պայմանավորված է զանազան պատճառներով, այդ թվում՝ երաշտ, տեղումներ, կապիտալ ներդրումների նախագծերի նախատեսում, ազատ առևտրի գոտիների ստեղծում, սահմանային անցակետերի ձևավորում և տեղ-տեղ հանդիպող այլ հանգամանքներ:

Հետազոտության երրորդ գլխի երկրորդ և երրորդ ենթաբաժիններում կատարված վերլուծության պատկերն ամփոփվել են աղյուսակ 4-ում:

Չուգահեռներ՝ 1384-1395 (2005/06-2016/07) թթ. նախորդ տարվա համեմատությամբ գնի ցուցանիշների փոփոխության և քաղաքական-տնտեսական կարևորագույն զարգացումների միջև


Տարի		Գնի ցուցանիշների փոփոխության աստիճանը, %				քաղաքական-տնտեսական կարևորագույն զարգացումները		
Արեգակնային տոմարով	Մ.թ.	CPI	WPI	PPI	XPI	Նավթային զարգացումներ	Տնտեսական զարգացումներ	Քաղաքական զարգացումներ
1384	2005/06	12.1	9.5	9.5	16.2	Նավթի համաշխարհային շուկայի թանկացման շրջան	(*)	Պրն. Ահմարինեժարի նախագահության շրջան
1385	2006/07	12.1	9.5	9.5	16.2			
1386	2007/08	12.1	9.5	9.5	16.2			
1387	2008/09	25.4	-	21.8	13.1			
1388	2009/10	10.8	-	7.4	-6.8			
1389	2010/11	12.4	-	16.6	11			
1390	2011/12	12.1	-	9.5	16.2	Նավթի համաշխարհային շուկայի գների անկում	(**)	Պրն. Ռոհանիի նախագահության շրջան
1391	2012/13	30.5	-	29.6	88.6			
1392	2013/14	34.7	-	31.9	21.8			
1393	2014/15	15.6	-	14.8	-0.5			
1394	2015/16	11.9	-	4.9	-16			
1395	2016/17	9	-	5	-2.7			

(*) Իրանի յուրաքանչյուր քաղաքացուն սուբսիդիաների վճարում:

(**) Արտարժույթի գնի բարձրացում

Եվ վերջում ամփոփելով երկրորդ և երրորդ գլուխների վերլուծությունները, հետևյալ հայեցակարգային մոդելն ենք առաջադրել Իրանի նավթային եկամուտների հետ առնչվող և մեր հետազոտության շրջանակներում ուսումնասիրված փոփոխականների միջև կապը ներկայացնելու նպատակով (սխեմա 1):

Անխակ փոփոխական	Միջնորդ (մեղմացնող) փոփոխական	Կախյալ փոփոխական
-----------------	-------------------------------	------------------



Սխեմա 1. Իրանի նավթային եկամուտների վերաբերյալ հայեցակարգային մոդել⁷

Ներկայացված մոդելում նկատվում է, որ Իրանի նավթային եկամուտները՝ որպես անկախ փոփոխական, ենթարկվելով միջանկյալ փոփոխականների՝ նավթի համաշխարհային գնի և Իրանի նկատմամբ նավթային հարցում սանկցիաների, ազդեցությանը, մեղմացվում և փոփոխվում են, և արդյունքում ազդում կառավարության բյուջեի, ՀՆԱ-ի և սղաճի վրա: Հետևաբար, կառավարության բյուջեն, ՀՆԱ-ն և սղաճը համարվում են Իրանի «նավթային եկամուտներ» անկախ փոփոխականից կախյալ փոփոխականներ, որոնք կրում են միջանկյալ փոփոխականների ազդեցությունը:

- Կանխատեսումներ

Հիմք ընդունելով հետազոտվող ժամանակահատվածի տվյալները (և կանխատեսման համար վիճակագրական կատեգորիաներից ընդունված Microsoft Excel Forecast Function-ի օգնությամբ), կարելի է կանխատեսել մոտակա տարիների փոփոխությունները (աղյուսակ 5), որի շնորհիվ ոլորտի պատասխանատուներին հնարավորություն է ընձեռվում կողմնորոշվել պլանավորման հարցերում: Եթե նրանք կառավարման հարցում որդեգրեն անցյալի ուղենիշը, նրանց հեռանկարում սպասվում են նմանատիպ արդյունքներ՝ աշխատանքում ուսումնասիրված փոփոխականների կապակցությամբ: Դրանք նախատեսված արդյունքների հետ համընկնելու դեպքում, բնականաբար, կշարունակեն նույն ընթացքով, հակառակ դեպքում՝ հարկավոր է վերանայել անցած ուղին և անհրաժեշտ փոփոխություններ կատարել:

Աղյուսակ 5.

Հետազոտության յուրաքանչյուր փոփոխականի կապակցությամբ կանխատեսումները՝ 2017-2020 թթ. կտրվածքով*

⁷ Նշված մոդելը մշակվել է հեղինակի կողմից՝ ըստ աշխատանքում կատարված վերլուծությունների:

Տարի	Նավթ			Կառավարություն (հազար մլրդ ԻԻՀ դիալ)		ՀՆԱ (հազար մլրդ ԻԻՀ դիալ)		Սղաճ (%)		
	Նավթային հասույթներ, մլրդ ԱՄՆ դոլար	Արտահանումներ, մլն բարել/օր	Արտադրություն, մլն բարել/օր	Ծախսեր	Եկամուտներ	Առանց նավթի	Ներառյալ նավթը	Արտահանվող ապրանքի գնի ցուցանիշը	Արտադրողի գնի ցուցանիշը	Սպառողական ապրանքների և ծառայությունների գնի ցուցանիշը
2017**	45.6	1.4	3.6	2395.2	2210.6	5169.3	6333.3	12.1	13.9	16.4
2018	40.7	1.3	3.5	2601.7	2406.2	5203.4	6391.7	11.4	13.1	15.9
2019	35.8	1.2	3.4	2808.2	2601.9	5237.6	6450.2	10.8	12.3	15.4
2020	31.0	1.1	3.3	3014.6	2797.5	5271.8	6508.6	10.2	11.4	14.9

* Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից:

** Աշխատանքը 2018 թ. սկզբին վերջնական ամփոփելու և 2017 թ. ճշգրիտ տվյալների բացակայության հանգամանքով պայմանավորված, աղյուսակում 2017 թ. համար նշված տվյալներն ընթացիկ տարում կանխատեսման բնույթ ունեն 2017 թ. համար:

Հաշվի առնելով, որ նավթի արտադրությունն ու վաճառքը ենթակա է քաղաքական ու տնտեսական տարբեր գործոնների ազդեցությանը, հետևաբար, փորձագետների ընթացիկ կանխատեսումներով, նոր ավազաններում հորատումների ընդլայնման արդյունքում Իրանի նավթի արտադրության հնարավորությունները 2020 թ. կարող են հասնել օրական 4.5 մլն բարելի, իսկ նավթի մեկ բարելի գինը կազմելու է 55 ԱՄՆ դոլար⁸:

2020 թ. համար նախատեսվող տվյալներով, Իրանի ՀՆԱ-ն միջին հաշվով հասնելու է 451 մլրդ ԱՄՆ դոլարի, որը 2016 թ. գրանցված 393 մլրդ-ի համեմատ 5.2% աճ է գրանցելու⁹:

Գործարարության և զբաղվածության հարցերով ավագ փորձագետները պարզաբանելով Իրանի գործարարության ոլորտում կարևոր ցուցանիշները, նշել են, որ 2020 թ. Իրանի տնտեսության մեջ սղաճը մնալու է միանիշ թիվ¹⁰:

⁸ <https://www.iranenergy.news/2638/خير/صفت-نفث>

⁹ <https://www.isna.ir/print/96071507991/پیش‌بینی‌تولید‌ناخالص‌داخلی-داخلی-ایران>

Եզրակացություններ բաժնում ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները, ինչպես նաև տրվել են **առաջարկություններ**՝ ըստ վերլուծության հիման վրա կատարված կանխատեսումներ: Դրանք են՝

1. Իրանի տնտեսության գլխավոր և կարևորագույն մարտահրավերը կառավարության չափազանց մեծ ծախսերն են, որոնց համար անբավարար են պետական եկամուտները: Նավթային եկամուտների նվազումը նշանակալիորեն ազդում է պետականուտների վրա, իսկ այդ պայմանների շարունակականությունը հետագայում հանգեցնելու է երկրի համար բազմաթիվ տարբեր խնդիրների, որոնցից կարևորագույնը մակրոտնտեսական ցուցանիշների հետ են առնչվում:

2. Պետական ոչ նավթային եկամուտները ևս ենթակա են նավթային եկամուտների ազդեցությանը, քանի որ վերջիններից կախվածության պատճառով ՀՆԱ-ի մասով հանքարդյունաբերության ոլորտի արտադրության գծով առաջացող նվազումները հանգեցնում են նշված ոլորտի իրացման և հետևաբար՝ վճարվող հարկերի կրճատմանը:

3. Պետական ոչ նավթային եկամուտները շարունակ միջին հաշվով ապահովել են պետական բյուջեի 70%-ը, որի մասով անկում է նկատվել Իրանի նկատմամբ կիրառվող սանկցիաների սկզբում, 1392 (2013/14) թ. հասնելով նույնիսկ՝ 54%-ի, իսկ այդ ժամանակ կառավարությունը որդեգրելով որոշակի քաղաքականություն, քայլեր նախաձեռնեց հարկերի բարձրացման կապակցությամբ, 1395 (2016/17) թ. այն հասցնելով պետականուտների 66%-ին, ինչը հավասար էր 1387 (2008/09) թ. պետական հարկերի մասնաբաժնին: Հետևաբար, պետությունը սեփական եկամուտները կրճատելու նպատակով, որը սովորաբար ապահովում է նրա ծախսերի 58%-ը, ստիպված է նավթի վաճառքի, Կենտրոնական Բանկից վարկեր ստանալու, պետական պարտատոմսերի, շինությունների և կազմակերպությունների վաճառքի միջոցով հատուցել սեփական դեֆիցիտը:

4. Նավթային եկամուտների նվազումն ազդել է նաև կապիտալ ներդրման բյուջեների վրա, և այսպիսով, 1387 (2008/09) թ. պետական ընդհանուր ծախսերից կապիտալ ներդրման բյուջեի մասնաբաժինը կազմել է 27.7%, իսկ 1394 (2015/16) թ.՝ 14%, այսինքն՝ գրանցվել է 50%-ի չափով կրճատում: Այս հանգամանքը դադարեցրեց կապիտալ ներդրման նախագծերը, և արդյունքում հանգեցրեց տվյալ նախագծերում աշխատողների, ինչպես նաև դրանց համար շինանյութ, հումք և ծառայություններ ապահովողների գործազրկությանը:

5. Եկամուտների կրճատումը, և մյուս կողմից ծախսերի աճը՝ եկամուտների կրճատումների հարցում անուշադրության և կառավարման բացակայության պայմաններում, կառավարությանը կանգնեցնում են բյուջեի դեֆիցիտի խնդրի առջև:

6. ՀՆԱ-ի կապակցությամբ, հետազոտվող ժամանակահատվածում ՀՆԱ-ի արդյունքների ուսումնասիրումը պարզեց, որ պետականուտների աճին զուգահեռ, 1389 (2010/11) թ. նավթի մասնաբաժինը մինչև ՀՆԱ-ի 30%-ով ունեցել է ուղղակի ազդեցություն, սակայն նավթային սանկցիաների շրջանում այդ ազդեցությունը 1394 (2015/16) թ. հասել է 9%-ի, ինչը վկայում է նավթային եկամուտներից ՀՆԱ-ի կախվածության մասին:

7. Ինչպես նաև հետազոտության շրջանակներում պարզվել է, որ հանքարդյունաբերության հատվածը ևս կրել է նավթային սանկցիաների ազդեցությունը, քանի որ սանկցիաների տարիների ամբողջ ընթացքում ոչ միայն աճ չի գրանցվել այդ ոլորտում, այլ նույնիսկ նկատվել է տարեց տարի անկում, ինչը վկայում է նավթային եկամուտներից

¹⁰ <https://bazarnews.ir/fa/print/17963>

հանքարդյունաբերության ոլորտի խիստ կախվածության մասին: Այն նաև օժտված է եղել պետական օժանդակությունից, ինչը չափազանց վտանգավոր երևույթ է երկրի տնտեսության համար, քանի որ հանգեցնում է գործարանների ու ձեռնարկությունների փակմանը, աշխատողների գործազրկությանը, ապրանքների դեֆիցիտին ու թանկացմանը և սղաճի բարձրացմանը:

8. Սղաճի կապակցությամբ, հետազոտվող ժամանակահատվածում նկատելի է, որ Իրանում սղաճը 1385 (2006/07) թ.-ից սկսած աճել է նավթային եկամուտների ավելացմանը զուգահեռ, ինչը հասարակության մեջ կանխիկ գումարի ավելացման և դրամի ներարկման արդյունք էր, և երբ սանկցիաների ժամանակ կրճատվում են պետության նավթային եկամուտները, տարվա առանձին ամիսներին սղաճը հասել է նույնիսկ 40%-ի, ինչը պայմանավորված էր պետական ծախսերը հատուցելու նպատակով հարկերի ավելացմամբ, ԿԲ-ից կառավարության ստացած վարկերով և պետական պարտատոմսերի 20% տոկոսադրույքով իրացմամբ: Նույնիսկ նման պայմաններում կառավարությունը բարձրացնում է նաև իր կողմից մատուցվող ծառայությունները, իսկ այդ բարձրացումները, որոնք վճարվում են ձեռնարկությունների և անհատների կողմից, ուղղակիորեն գումարվում են ապրանքներին ու ծառայություններին և գանձվում սպառողից:

9. Ի լրումն նախորդ եզրահանգման, մյուս կողմից, ըստ կատարված հաշվարկների, մեծածախ գնի (WPI) և արտադրողի գնի (PPI) ցուցանիշների միջև կորելացիոն առավելագույն կապը ևս վկայում է այն մասին, որ շուկայի վերահսկումը գտնվում է նշված ձեռնարկությունների և անհատների ձեռքում, և նրանք իրենց պարտադրված ծախսերը հատուցելու նպատակով բարձրացնում են սեփական արտադրանքի գները: Իսկ սպառողական ապրանքների և ծառայությունների գնի (CPI) և մեծածախ վաճառքի գնի (WPI) ցուցանիշների միջև կորելացիոն նվազագույն կապը ցույց է տալիս, որ ապրանքների ու ծառայությունների մեծածախ վաճառողների ու սպառողների միջև առկա են միջնորդներ, որոնց առկայությունը հանգեցնում է ինքնարժեքի բարձրացմանը, ինչն էլ սղաճի հանգեցնող հանգամանք է:

Հիմք ընդունելով հետազոտության արդյունքները, մեր կողմից ներկայացվել են հետևյալ **առաջարկությունները**.

- Առաջարկվում է ամեն տարի նախորդ տարվա համեմատությամբ կրճատել պետեկամուտների կախվածությունը նավթից, ինչպես նաև՝ սեփական ծախսերը, փորձելով փոքրացնել կառավարության չափերը, հրաժարվել տնտեսական հարցերի տնօրինման պատասխանատվությունից՝ տնտեսական, արտադրական ու ծառայության բնույթի պետական գործերը վստահելով մասնավոր հատվածին և վերահսկելով դրանք:

- Առաջարկվում է աստիճանաբար և տարեց տարի կրճատել ընթացիկ ծախսերին հատկացվող նավթային եկամուտների մասնաբաժինը, նույնքանով ավելացնելով կապիտալ ներդրման հետ կապված ծախսերը: Հարկավոր է այս կապակցությամբ հաշվի առնել առանձին երկրների, այդ թվում՝ Լեհաստանի, Ճապոնիայի, Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի հաջող փորձը:

- Առաջարկվում է փստորոշման քայլեր նախաձեռնել հանքարդյունաբերության ոլորտում, բացահայտել նավթային եկամուտներից կենսական կախվածության մեջ գտնվող ռեսուրսները և կրճատել այդ կախվածությունը՝ որոշակի մեթոդների կիրառմամբ:

- Միաժամանակ ընդլայնել գյուղատնտեսության, անասնաբուծության և ծառայության հատվածները, որոնք նվազագույն ազդեցությունն են կրել նավթային եկամուտների կրճատումներից, որպեսզի դրանով հատուցվեն նավթի և հանքարդյունաբերության ոլորտների կորուստները: Չնայած հարկավոր է, որ գյուղատնտեսության և ծառայությունների ոլորտների

անհրաժեշտ մեքենաներն ու առանձին հումքեր ձեռք բերվեն նավթի վաճառքից ստացվող պետական արտարժույթի միջոցով:

- Նավթային եկամուտների տատանումները զուգակցվում են հարկերի տատանումների հետ: Նպատակահարմար է, որ կառավարությունը կրճատի սեփական եկամուտների՝ նավթից, ԿԲ վարկերից և այլ գործոններից կախվածությունը և քայլեր նախաձեռնի կայուն եկամուտների ուղղությամբ, այդ թվում՝ խրախուսել օտարերկրյա ներդրողներին Իրանում ներդրումներ կատարելու հարցով, ինչպես նաև կրճատել արտադրողների ու սպառողների միջև միջնորդական բնույթի գործունեությունը:

- Երրորդ աշխարհամասի երկրներում մշտապես բյուջեի դեֆիցիտը հանգեցնում է սղաճի, սակայն զարգացած երկրներում այն չի հանգեցնում սղաճի, քանի որ դա կախված է այն հանգամանքից, թե պետություններն ինչպես են հատուցում սեփական բյուջեի դեֆիցիտը: Եթե այն հատուցվում է ԿԲ-ից վարկեր ստանալու և պարտատոմսերի իրացման հաշվին, այն հանգեցնելու է սղաճի, սակայն այն դեպքում, երբ բյուջեի դեֆիցիտը հատուցվում է մասնավոր հատվածի ներդրումների շնորհիվ, սղաճ հիմնականում չի նկատվում:

Ատենախոսության հիմնական դրույթները հրապարակված են հետևյալ գիտական հոդվածներում.

1. Heidarian H., Revenue of Oil and its Effect on Macroeconomic in Iran// Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները գիտական հոդվածների ժողովածու, Երևանի «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարան, 1(21), Երևան, 2014, էջ 163-171:
2. Heidarian H., The Effect of Petroleum Price on GDP & GNP Evidence from Iran// Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները գիտական հոդվածների ժողովածու, Երևանի «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարան, 1(21), Երևան, 2014, էջ 171-179:
3. Heidarian H., Studying the relationship of oil revenues and budget with government performance over the last decade // Indian Journal of Fundamental and Applied Life Sciences, Vol. 5 (S4), 2015, pp. 315-321.
4. Heidarian H., Analysis of Relationship Between Oil Revenues and Budget and Government Performance Within Last Decade// Ֆինանսներ և էկոնոմիկա, 1-2 (185-186), Երևան, 2016, էջ 44-46:
5. Heidarian H. and Mnatsakanyan H., Effect of Price of Petroleum Products on Macroeconomics Parameters // International Journal of Applied Business and Economic Research, Serials Publications Pvt. Ltd., Vol. 15, N. 4, India, 2017, pp. 289-303.

ГЕЙДАРЯН ХУШАНГ

ВЛИЯНИЕ ЦЕН НЕФТЕПРОДУКТОВ НА МАКРОЭКОНОМИЧЕСКИЕ ПОКАЗАТЕЛИ (НА ПРИМЕРЕ ИСЛАМСКОЙ РЕСПУБЛИКИ ИРАН)

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.03 – “Финансы, бухгалтерский учет”.

Защита диссертации состоится 14-го марта 2019г. в 14.⁰⁰ часов, на заседании специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском государственном экономическом университете по адресу: 0025, г. Ереван, ул. М. Налбандяна 128.

РЕЗЮМЕ

Исследование значимо тем, что проясняет степень влияния реализации нефтепродуктов на сферу макроэкономики Ирана и последствия неосуществления продаж нефтепродуктов с точки зрения экономических показателей. Оно позволит предусмотреть пути предотвращения нежелательных последствий. Исследованием сделана попытка изучить все слабые и сильные стороны отсутствия нефтяной прибыли.

С целью обеспечения статистических данных и соответствующей информации использовались данные Центрального Банка ИРИ, которые постоянно публикуются в виде периодических изданий и отчетов.

В 2000-2004 гг. нефтяная продукция Ирана составляла около 4 млн баррелей в день, с 2005 года этот показатель вырос, достигая 4,4 млн баррелей в день. Этот процесс пошел на убыль параллельно с нефтяным шоком 2012 г. (снижение цен на нефть) и нефтяными санкциями и достиг 3,7 баррелей в день. Нефтяные доходы также в результате нефтяного шока 2006 г. по сравнению с 24,3 млрд долларами США в 2000 году, в 2011 г. составили 119, а в 2015 г. под воздействием нефтяных санкций – 33,6 млрд долларов США, что в период отмены санкций составило 55,8 млрд долларов США.

В течении 2008-2016 гг. наибольшая зависимость государственного бюджета от нефти зафиксирована в 2010 г. (53%), когда цена одного барреля нефти составляла 95 долларов США, а наименьшая отнесена к 2012 г. параллельно с шоком снижения цены на нефть (40 долларов США за один баррель) и как следствие, сокращением нефтяных доходов, в результате чего государство подняло налоговые доходы с целью обеспечения собственных расходов.

Поскольку государственные доходы распределяются на текущие расходы государства (зарплата служащих), снижение нефтяных доходов сильно влияет на работу правительства, в большей мере на планы строительства и застройки.

Текущие расходы правительства в 2008 г. составили 72% от общих расходов, а в 2015 г. увеличились до 86%, а часть нефтяных доходов в 2012 г. составляла 43% от общих доходов и в 2016 г. во время кульминации нефтяных санкций Ирана сократилась и достигла 33,7%. Правительство было вынуждено увеличить налоговую прибыль (с 57% общих доходов страны в 2012 г. доведя до 66,3% в 2016 г.).

Валовой внутренний продукт (ВВП) Ирана по базовой цене в 1999 г. составлял 43438,5 млрд риалов, и зафиксировав 32,7%-й рост в 2000 г. составил 576493, а в 2014 г. – 10807500 млрд риалов.

В 2012 г., когда давление нефтяных санкций совпало с шоком снижения мировой цены на нефть (цена за один баррель – 40-50 долларов США), часть нефтяной группы в доходах и ВВП сократилась на 37% по сравнению с предыдущим годом и по сравнению с 22%-и 2011 года в 2012 г. составила 15,1%, что в 2016 году составило 12723 тыс. млрд риалов (зафиксировав 14,3%-й рост по сравнению с предыдущим годом).

В 2016 г. с отменой санкций и одновременно с ростом других составных групп ВВП, нефтяная группа зафиксировала 61,2%-й рост по сравнению с предыдущим годом. Нефтяной шок не повлиял на сельскохозяйственную группу ВВП, но имел отрицательное воздействие и на нефтяную группу, и на группу горной промышленности.

Воздействие нефтяных доходов на инфляцию похоже на обоюдоострый меч: в случае эффективного управления доходами отрицательные воздействия сокращаются, в противном случае это приведет к существенным отрицательным воздействиям, инфляции и застою. Правильное управление наличностью и доходами не приведет к фиксации двузначной инфляции в обществе.

По результатам исследования можно сделать вывод, что важнейшие вызовы экономики Ирана – это огромные расходы правительства, для обеспечения которых доходы недостаточны. Сокращение нефтяных доходов предусматривает тяжелые условия для правительства: 70% государственного бюджета и 30% ВВП обеспечиваются нефтью и сокращение нефтяных доходов приводит к инфляции. Следовательно, необходимо сократить текущие государственные расходы.

Научная новизна исследования резюмирована следующим образом:

1. С помощью представленной концептуальной модели проанализированы и оценены два нефтяных шока (*мировой и в масштабе Ирана*) и воздействие нефтяных доходов на макроэкономические характеристики (госдоходы, ВВП и инфляция) Ирана в условиях этих шоков.

2. Оценивая воздействие нефтяных санкций на экономику Ирана, выявлено особое место и роль Ирана среди стран, экспортирующих нефть.

3. На основе результатов исследования разработан путеводитель последующего развития сферы, принимая за основу прогнозы, сделанные на основании анализа.

HEYDARYAN HUSHANG

**EFFECT OF OIL PRODUCTS OVER MACROECONOMIC PARAMETERS
(BY THE EXAMPLE OF THE ISLAMIC REPUBLIC OF IRAN)**

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the speciality 08.00.03 - "Finance, Accounting".

The defense of the thesis will take place on March 14, 2019 at 14:-00 o' clock at 014 Council of Economics of SCC RA at Armenian State University of Economics: 128 Nalbandyan Street, Yerevan 0025.

ABSTRACT

The importance of the investigation lies in the fact, that it clarifies the level of oil product sales impact over the macroeconomics of Iran and consequences of not selling oil products from the economic point of view. This will provide the possibility of envisaging the outcomes for prevention of non-favorable consequences. Investigation is undertaken for studying all weak and strong sides of lack of oil revenues.

For the purpose of providing statistical data and relevant information, the IRI Central Bank data have been used, which have been continuously published in periodicals and reports.

In 2000-2004, oil production of Iran was around 4 million barrels per day, which since 2005 was increased reaching to 4.4 million barrels per day. This process, during the oil shock of 2012 (oil price reduction) and along with the oil sanctions has declined dropping down to 3.7 million barrels per day. Also the oil revenues because of the oil shock (increase in oil prices) in 2006, have reached in 2011 to 119 billion US dollars instead of 24.3 billion and in 2000 by the effect of the sanctions it consisted of 33.6 billion US dollars, which during the cancellation of the sanctions reached to 55.8 billion US dollars.

During 2008-2016 the dependency of state budget from oil was registered (53%) in 2010, when oil price was 95 US dollar per barrel, and the least was registered in 2012, during the oil shock (40 USD per barrel) and along with the reduction in oil revenues, as a result of which the government increased tax revenues for the purpose of ensuring its own expenses.

As the state revenues are allocated to current expenses of the government (services, salaries), the reduction of oil revenues have significant effect on government works, mostly over construction and urban planning projects.

The current expenses of the government within allover expenditures were increased reaching up to 86%, compared to 72% in 2008 and the in 2012 the registered 43% of oil

share within the total revenue in 2016 during the peak of Iran's oil sanctions was reduced and registered 33.7%. The government was forced to increase tax revenues (reaching up to 66.3% in 2016 within the total revenues instead of 57% in 2012).

In 1999 Iran's GDP in base price was 43438.5 billion rial, which in 2000 increased by 32.7% reaching up to 576493, and in 2014 was 10807500 billion rials.

In 2012, when the sanction pressures coincided with the international oil price reduction (40.50 USD per barrel), the oil group shares in the revenues and GDP compared to the previous year were reduced by 37%, in 2016 it was 15.1% compared to 22% in 2011, which in 2016 was 12723000 billion rials (registering increase of 14.3% compared to the previous year).

In 2016 by the lifting of the sanctions, the oil group compared to the previous year registered 61.2% increase along with the increase of other groups in the GDP. Oil shock did not have effect on agricultural group of the GDP, but had a negative impact on both oil and mining groups.

The impact of oil revenues over inflation is similar to double-edged sword, in case of efficient management of revenues the negative impacts are reduced, otherwise it will lead to significant negative impacts, inflation and stagnation. Correct management of the cash and revenues will not lead to double digit inflation registry in the public.

With the results of the survey it can be concluded that the most important challenges of Iran's economy are the immense expenses of the government and the revenues are not sufficient for ensuring them. Reduction of oil revenues will provide heavy conditions for the government: 70% of the state budget and 30% of the GDP are provided from oil, and reduction of oil revenues will lead to inflation. Therefore it is necessary to reduce current expenditures of the government.

Scientific novelty of the survey is summarized as follows:

1. With the presented conceptual model the two oil shocks have been analyzed and assessed (internationally and by Iran's scale) and within the conditions of these shocks the impact of oil revenues over Iran's macroeconomic parameters (state revenue, GDP and inflation).

2. Iran's specific position and role within the oil exporting countries has been revealed, by assessing the impact of oil sanctions over Iran's economy.

3. Based on the results of the survey, future development guide of the field has been processed, taking into consideration the predictions based on the analysis implemented.

